Կոնդակ Արմաւրի Հայոց գործակալ Տ. Գաբրիէլ քահանայ Թուելեանի անունով, որով, թեմական Առաջնորդի միջնորդութեան համաձայն, աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց։ 26 հոկտեմբերի, թ. 1867։

Կոնդակ Աքքերման քաղաքի Երեմիա քահանայ Ապրիլեանի անունով, որով, համաձայն Նոր-Նախիջևանի և Ռեսսարաբիայի թեմական Առաջնորդի միջնորդութեան, «կամիլաւկա» գլխարկ կրելու իրաւունք շնորհուեց։ 24 Նոյեմբերի, թ. 2108։

---

## ԳԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Ատրպատականի Կոնսիստորիայի 1914 թ. գեկտ. 11-ի № 4184 յայտարարութիւնը—Կրանովոդակի Գարեգին քահանայ Ասրեանի և իւր ծխականների մէջ ծագած գժտութիւնների մասին, որոշեց. ի նկատի ունենալով, որ Կրանովոդակի հովիւ Ասրեան քահանայի այնտեղ մնալը դառել է անհնարին, և իրականապէս Ասրեանն այժմ հեռացել է Կրանովոդակից ու ապրում է ուրիշ քաղաքում, ուստի համարել Գարեգին քահանայ Ասրեանին արձակուած Կրանովոդակի ծխական քահանայի պաշտօնից և առաջադրել Ատրպատականի Կոնսիստորիային կարգադրել նոր քահանայ ընտրել տալ Կրանովոդակի համայնքի համար։ 2 Նոյեմբերի, թ. 404։

Սինօդը՝ լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի 1914 թ. հոկտ. 30-ի № 2995 յայտարարութիւնը—Սեղրաք Տէր Դանիէլեանին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. համաձայն նորին Սրբութեան մակագրութեան թոյլ տալ Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունելու Շուշու գաւառի Փիրջամալ գիւղի բնակիչ Սեղրաք Տէր Դանիէլեանցին և ի նկատի ունենալով, որ թեմում եպիսկոպոս չկայ՝ յանձնել Մ. Աթոռի միարան Տ. Բագրատ

եպիսկոպոսին ձեռնադրել յիշեալ Տէր Դանիէլեանին քահանայ Փիրջաման գիւղի վրայ։ 4 նոյեմբերի, թ. 408։

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան այս տարուայ հոկտեմբերի 26-ի, № 1847, մակագրութիւնը, որոշեց. համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեան, պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին տալ Մ. Աթոռի միաբաններին միանուագ նպաստ մի ամսուայ ռոճկի (և ոչ անդրադարձ) քանակութեամբ և հրամանագրել Թեմական առաջնորդներին տալ բոլոր դրսի հոգևոր պաշտօնեաներին և ծառայողներին նպաստ նրանց կէս-կէս ամսական ռոճկի չափով։ 4 նոյեմբերի, 415։

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան անցած հոկտեմբերի 28-ի, № 1884 մակագրութիւնը—ի Տէր հանգուցեալ Համազասպ վարդապետի թողած գոյքի մասին, որոշեց. $4^{0}/_{0}$ № 15970 (500 ռուբլիանոց), № 03029 (100 ռուբլիանոց), № 03030 (100 ռուբլիանոց) ռենտաները և խաղարկութեան տոմս I կարգի $5^{0}/_{0}$ սերիա 09467 № 4 (ռուբլիանոց), նաև մնացած կանխիկ դրամ 55 ռուբլի 80 կոպ. պատուիրել մուտք գրել Մ. Աթոռի մատեանում Համազասպ վարդապետի անունով, տոկոսները գործադրելով Մայր Աթոռի պէտքերի համար։ 6 նոյեմբերի, թ. 422։

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան անցած հոկտեմբերի 31-ի, № 1930 մակագրութիւնը, որոշեց. համաձայն Նորին Վեհափառութեան մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին փոխադրել Ղարաբաղի թեմի ժամ. կառավարիչ Զաւէն վարդապետի անունով դպրոցական ֆոնդի գումարներից 1600 ռուբլի բաժանելու թեմի ծխական դպրոցներին ըստ այսմ. Սուլթան-Նուխի, Բեանդեակ և Զողլու-Միրզաբէկլու գիւղերին 200-ական ռուբլի, Սէյիդի-շէն, Խանաբադ, Վերին և Ներքին Սզնէք 100-ական ռուբլի և Խանքենդ աւանի, Դշլաղ, Նորագիւղ, Հարաւ, Բռռանի, Ղաւախան, Հացի, Սոս, Բերթ, Մոխանեղ, Թաղաւեռ և Մոխրինէս գիւղերին 50-ական ռուբլի։ 11 նոյեմբերի, թ. 427։

Սինօդը՝ լսելով Տաթեւի վանքի եւ յարակից շինութիւնների նորոգութեան համար ծախսած 1448 ռուբ. 07 կոպ. գործը, **որոշեց.** ընդունելի համարելով կատարուած ծախքերը, թոյլ տալ Տաթեւի փոխանորդին կալուածների արդիւնքից ելք գրել 1448 ռ. 07 կ. նորոգութիւնների համար արած ծախքը եւ գործը կարճել։ 11 նոյեմբերի, թ. 429։

Սինօդը՝ տեսնելով Նոր-Նախիջեւանի Հայազգի աղքատաց Հոգաբարձութեան հոկտեմբերի 12-ի, № 888 գրութեամբ ուղարկած Բաղտասարեանի կտակով թողած կալուածքի արդիւնքից 550 ռուբլին, որ պէտք է վճարուէր Վարագայ վանքի դպրոցի Ռուսաստան գաղթած ուսուցիչներին, **որոշեց.** պատուիրել Մ. Աթոռի Դանձապահին վերոյիշեալ գումարը՝ 550 ռ., փոխադրել Թիֆլիզ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին, պատուիրելով վերջինիս այդ դրամը բաժանել Վարագայ վանքի դպրոցների ուսուցիչներին, Վանի առաջնորդական տեղապահ Տ. Եղնիկ վարդապետի ներկայութեամբ։ 13 նոյեմբերի, թ. 434։

Սինօդը՝ լսելով Անիի վանահայր Միքայել վարդապետի անցեալ նոյեմբերի 4-ի յայտարարութիւնը—իր ռոճիկի յաւելման մասին, **որոշեց.** պատուիրել Ղարսի Հոգեւոր Կառավարութեան վճարել, այս տարուայ նոյեմբերի մէկից սկսած, Անիի վանահայր Միքայել վարդապետին ամսական քսան եւ հինգ ռուբլու փոխարէն երեսուն ռուբլի։ Անկախ դորանից պատուիրել յիշեալ Կառավարութեան, որ ռոճիկը ժամանակին ու կանոնաւոր վճարի։ 16 նոյեմբերի, թ. 437։

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան նոյեմբերի 18-ի, թ. 2062 մակագրութիւնը, **որոշեց.** համաձայն Նորին Սրբութեան մակագրութեան պատուիրել Մայր Աթոռի Գանձապահին գաղթականների գումարից Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովի անունով 50000 ռուբլու վարկ բանալ։ 20 նոյեմբերի, թ. 451։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան նոյեմբերի 12-ի թ. 200 մակագրութիւնը, ՈՐՈՇԵՑ. համաձայն Նորին Վեհափառութեան մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին փոխադրել Թիֆլիզ Դաւիթ Խան Ալեան Իւզբաշեանի անունով ի նպաստ Վան քաղաքի միլիցիայի Նուպար Փաշայի փոխադրած 4000 ռուբլին։ 23 նոյեմբերի, թ. 456։

Սինոդը՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի այս տարուայ մայիսի 12-ի, թ. 2080 յայտարարութիւնը— Շմաւոն Փաշեանին քահանայ ձեռնադրելու մասին, ՈՐՈՇԵՑ. թոյլ տալ Վրաստանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Աղաւրէթ գիւղի բնակիչ Շմաւոն Փաշեանին և առաջարկել թեմի առաջնորդին ձեռնադրել յիշեալ Փաշեանին քահանայ Աղաւրէթ գիւղի վրայ։ 27 նոյեմբերի թ. 470։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան դեկտեմբերի 1-ի թ. 2158, մակագրութիւնը, ՈՐՈՇԵՑ. համաձայն Նորին Վեհափառութեան մակագրութեան, պատուիրել Մայր Աթոռի գանձապահին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով 50000 ռուբլու վարկ բանալ՝ Բագուից ալիւր և ցորեն գնելու գաղթականների համար։ 2 դեկտեմբերի, թ. 478։